

Արխայուղի վրայ հագնում են լուսնի, որ մէջքի մօտ բուզմայով սեղմուկով իջնում է ծնկներից ներքև։ Կարում են սև շալից։ Ոտներին հագնում են քոշեր կամ տրեխներ։ Գլխներին ծածկում գլուխ, որ կարում են գառան մորթից։

Հարուստները ձմեռը հագնում են չուխի տակից գլուխ (մուշտակ), գառան մորթից կարած, չուխի տարազով։

Կտածուկի (տատուածի) սովորութիւնը մինչև հիմայ էլ պահպանուել է Գանձակի գաւառում. այսպէս՝ ձեռքի հարուստներով կամ երկար տրորելով անգագայացնում են մարմնի այն մասը, որ ուզում են կտածել, ինչպէս ձեռքերը, աչտերը, ճակատը և այլն, և յետոյ փոշիացած ածուխի շողախի կամ թանաքի մէջ թաթախած թելը անցկացնելով ասեղին՝ անց են կացնում կաշուի միջով. ածուխը կամ թանաքը թելից անցնում է մարմնին և սև բիծ տալիս, որ շատ երկար դիմանում է։ Սրան գիւղացիները էլ են ասում. անում են երեսին, ձեռքերին, ծների վրայ, կրծքին և այլն. բայց սովորաբար մի մի խալ անում են ունքերի մէջ, մի մի հատ էլ աչքերի տակ։

ՀՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ. Գանձակի գաւառում ևս աղջիկներին շատ փոքր հասակումն են պսակում և մանաւանդ՝ նշանում։ Ութ տարեկանը արդէն նշանում է, իննը-տաս տարեկանը՝ պսակում։ Ես ներկայ եղայ Գետաշէնում մի նշանդէքի, հարսնացուն հագել ութ տարեկան լինէր. մի կարճ, փոքրիկ աղջիկ էր, որ մարդկանց մէջ չէր երևում։ Հայրը գրկեց նրան և կանգնացրեց թաղթի վրայ, որ փոքր ինչ երևալ։ Եւ երբ քահանան առաջարկեց աջ ձեռքը մեկնել, որ մատանին դնեն մատը, նա ձախը մեկնեց։ Խեղճ աղջիկը ապշած կուէ էր եկել, նրա գէմքը արտայայտում էր, որ չի հասկանում, թէ ինչ են անում իւր Հետ։ Երբ քահանան հարցրեց, թէ համաձայն է ամուսնանալու փեսացու երիտասարդի Հետ, նա շարունակեց անշարժ մընալ և կարծես չհասկացաւ էլ հարցը։ Այն ժամանակ քահա-

նա՛ն բարկացած Հրամայեց նրան, որ զլուխը շարժէ: Եւ նա իսկոյն շարժեց:

Իրենց գիւղացիներէ ասելով եթէ աղջկան զգալով խփէք և նա վալը չընկնի՛ արդէն ժամանակն է պսակելու, նա արդէն ուժեղ է և կարող է աշխատել:

Վերջին տարիներս միայն գիւղերի առաջաւոր, փոքր ի շատէ կըթուած մարդիկը փոքր ինչ ուշ են պսակում իրենց աղջիկներին, սակայն սրանք էլ չեն թոյլ տալիս 14-15 տարին անցկենալու, որովհետեւ 17-18 տարեկան աղջիկը արդէն տանը մնացած է Համարում և միայն ալրի մարդիկը կաւոդ են նրանց ուզել:

Տղաները, աղջիկները Հետ Համեմատելով՝ շատ ուշ են պսակում. սովորաբար 21 տարին անց, երբ զինուորական ծառայութիւնից կամ ազատում են և կամ կատարում: Բացառութիւն կազմում են անդրանիկ որդիները, որոնք զինուորական ծառայութիւնից ազատ լինելով, շարունակում են նախնի սովորութեամբ շատ վաղ, 14-15 տարեկան Հասակում պսակուել:

Բացի զինուորագրութիւնից, Բազուն ևս բաւական մեծ ազդեցութիւն է ունեցել պսակուողների Հասակի վրայ: Պատանիները, երիտասարդները սիրով դիմում են Բագու փող դիզելու, որպէս զի յետոյ պսակուին: Անցնում են տարիներ, և երիտասարդները թէ՛ մի քանի կոպէկով Հարստացած, բայց Ֆիզիքսպէս և բարոյապէս աղքատացած վերադառնում են գիւղ և մատաղահաս աղջիկների Հետ ամուսնանում: Դժբաղդաբար ամուսնացող զոյգերի տարբերութիւնը Հետզհետէ մեծանում է, ամուսինը շատ աւելի քան Հինգ տարին մեծ է լինում կնոջից:

Խնամաբօթեան աստիճաններ.— Եթէ պսակուողները ազգակցութեան եօթերորդ աստիճանի են՝ սյակի թոյլտուութիւն ստացում է տեղական կառավարութիւնից, եթէ վեցերորդ՝ կոնսիստորիալից, իսկ եթէ Հինգ՝ սինոդից: Այսպէս և խնամութեան 5 աստիճանը թոյլ է տալիս կառավարութիւնը, չորրորդը կոնսիստորիան, իսկ աւելի մօտիկը՝ սինոդը:

Թէ՛ և ո՛չ եկեղեցական, բայց սովորութեան իրաւունքով

Թող չի տրուում որդեգրին ամուսնանալ որդեգրողի որդիներին կամ քույրերի, եղբայրների հետ:

Ընդհանրապես պսակի թողտուլթիւն խնդրում են ո՛չ թէ նշանադրութիւնից, այլ պսակից առաջ, երբ պսակուող զոյգը միմեանց բաւական մօտեցած և բնտանիքներն էլ բաւական ծախսեր են արած: Այս պատճառով էլ չհասութեան դէպքերում շատ դժուար է լինում նրանց յետ կեցնել պսակելու խոստումից, մանաւանդ որ ժողովուրդը նշանուած աղջկայ վրայ այլ ևս չի նայում որպէս նախկին անարատ կոյսի, մի օտարի շունչ այնուամենայնիւ անցել է նրա երեսով: Եւ ահա այս է պատճառը, որ նշանուած զոյգը ամէն միջոցի դիմում է պսակի թողտուլթիւն ստանալու, և երբ ո՛չ մի կերպ չի յաջողւում, հարսանիք են անում և փոխանակ պսակի խորհուրդը կատարելու, հարս ու թագուոր հարսնէորներով շրջապատուած՝ դառու գուռնի առաջնորդութեամբ գնում են եկեղեցու դաւիթը, համբուրում եկեղեցու դուռը և վերադառնում: Այնուհետև նրանք պսակուած են համարւում, թէև ժողովուրդը փոքր ինչ ծուռ աչքով է նայում նրանց: Քահանան այլևս չի յաճախում նրանց տուն, չի օրհնում, նրանց չի հաղորդում, բայց նրանց որդիներին մկրտում է և ապօրինի դաւակ համարում: Տասնեակ տարիներից յետոյ կամ հոգևոր իշխանութիւնը զիջանելով իրաւունք է տալիս պսակուելու և կամ սրանք օրդեգրում են իրենց զաւակներին, և կամ կտակով իրենց կարողութիւնը նրանց թողնում:

Ամուսնացողների եւ սրանց ծնողների համաձայնութիւնը.— Ընդհանրապէս դեռ այժմս էլ հազիւ է պատահում, որ ամուսնացողների համաձայնութիւնը ամուսնութեան վերաբերմամբ հարցնէին և կամ նրան մի առանձին նշանակութիւն տալին: Եթէ հարցնում էլ են, այն էլ տղային, իսկ աղջկան ո՛չ մի անգամ և ի՞նչ հարցնեն, քանի որ նա մի փոքրիկ 8-9 տարեկան երեխայ է: Չափահասների վերաբերութեամբ փոքր ինչ զգոյշ են. սրանք, բռնութեան դէպքերում փախչում են իրենց սիրածի հետ: Ամուսնութեան խնդրում զերակշիռ ձայն ունին մայրերը և մանաւանդ աղջկայ մայրը: Սա իւր

Հաւանած տղային գրաւելով՝ երբ տեսնում է, որ նրա ծնողները և կամ իւր ամուսինը չեն Համաձայնում, տալիս է տղային, թէ փախցրու, և յետոյ, իբր թէ բոլորովին անմասն է այդ գործում, խփում է ծնկներին և աղմուկ բարձրացնում, թէ տարան, աչքի լոյս աղջիկս տարան:

Պատահում են նաև դէպքեր, երբ ծնողները փեսացուի բացակայութեան միջոցին, առանց նրա Համաձայնութիւնն առնելու, նշանում են նրան: «Հալալ կաթնակեր» տղայի պարտականութիւնն է խոնարհիլ ծնողների կամքի առաջ:

Նշանադրութեան զանազան ձևեր.— Այս զաւառում կան նշանադրութեան Հետեւալ ձևերը.

ա. Օրօրոցախազ.— Երբ երկու գերդաստան շտապում են շուտով բարեկամանալու և կամ երբ մինի երեխաները չեն ապրում, փոքր Հասակում և նոյն իսկ օրօրոցում նշանում են մանուկներին, որպէսզի միւս երեխայի բախտը ապրեցնէ և առաջնին: Այսպիսի նշանադրութեան ժամանակ ծնողները խաչաձև քեարտում են օրօրոցների լծերը և կարմիր կանաչ թիւ կապում վերայից: Այսպիսի նշանադրութիւն այժմ թէև քիչ, բայց և այնպէս՝ դարձեալ տեղի է ունենում: Զատ Հազիւ է պատահում, որ այս ձևով նշանադրուածները մեծանալիս հրաժարուէին ամուսնանալուց: Ժողովուրդն էլ սաստիկ դատապարտում է այդպէս վարուողին:

բ. Խաղկազարդի նշանադրութիւն.— Նախապէս առնելով Հարսնացուի ծնողների Համաձայնութիւնը՝ տղայի մայրը կամ մի մօտիկ ազգական ծաղկազարդի երեկոյեան մի կարմիր քող է ձգում Հարսնացուի գլխին և մի խաչանիշ մօմ, որի վրայ կարմիր և կանաչ թիւ է կապուած, տալիս նրա ձեռքը:

գ. Վարդավառի նշանադրութիւն.— Վարդավառին ճաշից յետոյ գրեթէ բոլոր գիւղացիները Հաւաքւում են մի ընդարձակ, Հարթ տեղ և դառուլ զուռնի ներդաշնակութեամբ միմեանց ձեռք բռնած պարում «գոմփի» և այլ պարեր: Խմբական պարերից յետոյ սկսում են քնուրույն, կաքաւ: Այս ժամանակ նշանուիլ ցանկացող երիտասարդի մայրը, նախապէս առած լինելով իւր Հաւանած տղջկայ ծնողաց Համաձայնութիւնը,

բռնում է այդ աղջկայ ձեռից, բերում զուռնաչու առաջ, մի կարմիր չարդաթ ձգում գլխին և հրամայում զուռնաչուն. Աստուած՝ քո որդուն էլ էս օրին արժանացնի, մի լաւ հաւա (եղանակ) ածաւ:

Ջուռնաչին իսկույն մինչև ականջները փքում է այտերը և կարմրած աչքերը ճպճպացնելով՝ ածում հաւա-դարան: Աղջիկն սկսում է պար գալ. իսկ նրա ապաշայ սկեսուրը միքանի պտոյտ է անում նրա շուրջը և պարի կիսին մօտենում նրան, համբուրում և մի խնձոր, մէջը մի մատանի և կամ արծաթի զրամ խրած տալիս ձեռքը, մի քիչ միրգ ածում զրպանը և ծապ տալով խնդրում շարունակել պարը: Աղջիկը խնձորը ձեռին շարունակում է պարել. կնոջ ազգականները «շորոշ» են տալիս այսինքն զուռնաչուն նուիրելու համար դրամներ են դնում պարեկի բուռը: Իսկ սա մի քիչ էլ պարելուց յետոյ բռնի դրամները ձգում է զուռնաչու առաջ և խնձորը ձեռին վազում դէպի իւր ընկերուհիները: Այնուհետև նա արդէն նշանուած է համարոււմ այդ կնոջ որդու հետ, որ շատ անգամ հանդիսատես է լինում այդ ծիսակատարութեան:

Մի քանի աւելի լուսաւորուած գիւղերում երիտասարդը ոչ թէ լոկ հանդիսատես է լինում, այլ ինքն է դեր կատարում. երբ աղջիկը սրա ազգականուհիների ստիպմամբ սկսում է պարել, երիտասարդը նրան «շորոշ» է տալիս արծաթ կամ ոսկի դրամ: Եւ եթէ նա ընդունում է, սրանով նա արտայայտում է իւր համաձայնութիւնը. պարի վերջին նա իրեն տուած դրամը ձգում է զուռնաչու առաջ և ինքը փախչում:

դ. Սովորական Եւրոպայի. նախապէս մի բարեկամի միջոցով աղջկայ ծնողների համաձայնութիւնը առնելով, երիտասարդի հայրը միքանի բարեկամների հետ մի երեկոյ գնում է աղջկայ տունը, տանելով մի մատանի, մի թուռնի գինի, մի շիշ օղի և մի քիչ չոր մրգեր, մեղր և այլն: Այստեղ հրաւիրում են և աղջկայ բարեկամները, ինչպէս և քահանան: Քիչ խօսակցութիւնից յետոյ բոլորը նստում են ընթրելու, որի ժամանակ խմում են «ջուրիտ օջախի կենացը» և բարեմախտում, որ Աստուած մի օջախից միւսին «խէր» տայ:

Ընթրիքից յետոյ քաշտնան կատարում է նշանադրութեան ծէսը. Հարսին քողով ծածկած կանանց սենեակից բերում են տղամարդկանց մօտ, կանգնեցնում երիտասարդի կողքին, քահանան Հարցնում է սրանց փոխադարձ Համաձայնութիւնը, երիտասարդը գնում է Հարսնացուի աջ ձեռի մատնամատը բերած մատանին և ապա քահանան մի պահպանիչ—ով օրհնում է սրանց: Ի վերջոյ Հանդիսականները մի մի բաժակ օղի են խմում, շնորհատրում, բարեմախտութիւններ անում ու ցըրւում: Ամենից ուշ գնում են խնամիչները, մի մի գոլգ գուլպայ նուէր ստանալով:

Այրի կնոջ ճեանադրութիւն.— Այրի կնոջը նշանադրելիս, նախապէս առնում են նրա Համաձայնութիւնը և ապա պաշտօնապէս խնդրում նրա ձեռքը նրա սկեսուրից կամ սկեսրայրից: Սրանք էլ պատասխանում են Հարցնելով նրա կամքը: Այս ձևականութիւնը կատարւում է մինչև անգամ և այն դէպքում, երբ այրի կինը այլ ևս չի ապրում իւր սկեսրանց տանը, այլ իւր ծնողների և կամ մի ազգականի մօտ: Համաձայնութիւնն ստանալուց յետոյ նոր փեսացուն գալիս է այրի կնոջ սկեսրանց տուն, Համբուրում սկեսուրի և սկեսրայրի ձեռքերը, և նրանց մայրիկ ու Հայրիկ կոչում: Սկեսուրը յիշելով իւր մեռած որդին, լաց է լինում, Համբուրում է նոր փեսացուին, նրան որդի կոչում և իւր մեռած որդու զգեստներից նուիրում նրան, որ Հագնի: Դրանից յետոյ նոր փեսացուն մի թաշկինակ և կամ մի դանակ է նուիրում Հարսնացուին և նրանից ստանում մի այգլպիսի նուէր, որով և նշանադրութիւնը կատարուած է Համարում:

Թաս խմել.— Նշանադրութիւնից յետոյ փեսացուն մի քանի անգամ գնում է իւր Հարսնացուին տեսնելու և ամէն անգամ տանում է զանազան ընծաներ, ինչպէս դանակ, թեյ, ասեղ, փոքրիկ Հայելի, մրգեղէններ, և այլն: Զոնքանչն էլ դրանց փոխարէն ամէն անգամ մի մի գոլգ գուլպայ կամ չաբաղ է նուիրում նրան:

Մի օր էլ փեսացուն իւր ընկերների հետ է գալիս Հարսին տեսութեան: Այս ժամանակ ընկերներից աւագագոյնը մի

շիշ օդի է բերում իւր հետ և սովորական հարց ու բարեւից յետոյ, ածում է մի բաժակ օդի, վերան հաց ու աղ դնում և տալիս փեսացուին, որ զոքանչի կենացը խմի: Փեսացուն բարեմախտութիւններ անելով խմում է և աղ ու հացը ուտում, որով և նա երդւում է հաւատարիմ մնալ իւր ուխտին: Յետոյ ընկերներն են խմում օդի, բարեմախտութիւններ անելով և յօգուտ հարսի 20—25 կոպէկ նուիրում: Լաւ հիւրասիրութեամբ և ընթրելուց յետոյ փեսացուի ընկերները գնում են, ստանալով մի մի զոյգ գուլպայ նուէր, իսկ փեսացուն մնում է այլտեղ և գիշերում: Այս հանդէսը «թաս-խմել» է կոչւում:

Խոնջանք.—Նշանադրութիւնից մինչև պսակը շատ անգամ տւում է մի և երբեմն մի քանի տարիներ: Այս երկար միջոցում խնամիները հիւրասիրում են միմեանց և նշանաւոր տօներին ընծաներ ուղարկում: Այս ընծաները, որ խոնջ են կոչւում, ուղարկւում են փեսացուի տանից, որի փոխարէն ստացւում են հարսնացուի տանից աւելի էժանազին ընծաներ: Այս խոնջանքը պարտաւորական են ու որոշ, և եթէ չուղարկուին, մեծ անբաւականութիւնների տեղիք կուտան:

Նշանաւորները ուղարկւում են հետևեալ տօներին.

Մեծ պասիկն.—Այս պասի առաջին օրում ուղարկւում է 7 հատ ձիթով եփած գաթայ, եփած կարտոֆիլ, լոբի, փլաւ, թթու դրած շուշան, սոխ, մի թունդի գինի և մի շիշ օդի: Սրա շիշի բերանին հարսնացուն ուլունքներով զարդարում և շորից մի գեղեցիկ խցան է շինած լինում: Այս խոնջան կոչւում է «պաս շնորհատրէքի» և տանում է տան հարսներից կամ երեխաներից մինը: Բերողին մի թաշկինակ, կամ մի զոյգ գուլպայ և կամ 10—15 կոպէկ նուէր են տալիս:

Միջունքին.—Մեծ պասի առաջին շաբաթում ցօրներ լցնում են տաք ջրի մէջ, յետոյ լցնում մի տաք պուտուկի մէջ, բերանը ծածկում. հետևեալ օրերը կրկին տաք ջուր են շաղ տալիս պուտուկի մէջ և յետոյ ջուրը քամում, պուտուկի բերանը ծածկում: Մի քանի օրից, երբ ցօրներ ծլում է, լցնում են մի խոնջի մէջ և շարունակում ամէն օր տաք ջուր շաղ տալ և սաւանով ծածկել: Միջունքին, երբ արդէն բաւակա-

նաչափ ծլած է լինում, մօտը դնելով ձիթով եփած փլաւ, լոբի, խնձոր և ալլն, գինի, օղի, ուղարկում են Հարսնացուի տուն: Սրանք էլ դանակով կտրտում են ծիլերը, լցնում տաք ջրի մէջ, մի քանի անգամ ձեռքով ճմում, լետոյ քամում, մաղի միջով, և ապա նորից կաթսայի մէջ լցնելով՝ մի քիչ ալիւր են մաղում վերան՝ և դնում կրակին եփելու: Ծիլի հիւթը դուրս է գալիս և մի տեսակ թանձր, քաղցր հեղանիւթ կազմում, որ լետոյ հացի վրայ քսելով ուտում են:

Զատեկին. — Ուղարկում են մօտաւորապէս 15—20 հատ կարմիր ներկած ձու, մի շիշ օղի, և տան մեծի համար մի գոլգ գուլպայ: Երբեմն սրանց փոխարէն ուղարկում են միայն մի թաշկինակ, ծալրին 50—60 կոպէկ կապած: Քաղաքում ուղարկում են հարսի և նրա քոյրերի ու մօր համար զանազան ընծաներ, մի գառ՝ կանանց կարմիր մետաքսեայ թելը պողբերին կապած:

Վարդավառին. — Մի քանի գոլգ գաթայ, կաթնաւ (կաթով եփած բրինձ), մի տապակած հաւ, երկու ապսէ ձուածեղ, որոնցից մինը պատկանում է առանձնապէս փեսացուին, պանիր և ալլն:

Նոյն օրը Հարսնացուն իւր ձեռքով փնջած ծաղիկների մի փունջ դնելով մի ապսէի մէջ և շուրջը խնձորներ դարսելով՝ ուղարկում է փեսացուին:

Նաւասարդ. — Առաւօտեան շատ վաղ, արեւը դեռ ևս չծագած, Հարսնացուի տանից մինը տանում փեսացուի տան հերթիկից, ընկոյզ, խնձորներ և զանազան, չորացրած մրգեր է վալը ածում, և հերթիկից «ճլուանք» — խնձորի կամ տանձի շարան — կախում:

Խոնջաներ է ուղարկւում նաև խոտի քաղը վերջացնելիս, ցորենի կալսելն սկսելիս և ալլն:

Խաչեղբայր կամ պէլ. — Փանձակի գաւառում ևս խաչեղբայրը տոհմական է լինում, մի քանի սերունդ շարունակ միեւնոյն տոհմի սերունդներից են հրաւիրում իրենց խաչեղբայրներին: Անհրաժեշտ չէ, որ միշտ միեւնոյն անձը լինի խաչեղբայր, բաւական է, որ միեւնոյն տոհմից լինի: Խաչեղբայրները շատ

մեծ յարգանք են վայելում սանամօրանց կողմից, ամէն ուրախութեան և տխրութեան դէպքերում խաչեղբայրը ներկայ է գտնուում և առաջնակարգ պատիւ ստանում: Սանամայրը մինչև մահ երբէք չի խօսում նրա հետ, ի նշան իւր յարգանքի, մինչև անգամ նրան տեսնելիս թաք է կենում և նրանց տան դռնից երբէք չի անցկենում:

Խնամխօս. — Պսակադրութիւնից մի քանի շաբաթ առաջ փեսացուի հայրը մի քանի բարեկամների և քահանայի, տանուտիրոջ, երեցփոխանի և ուրիշ մի քանի մարդկանց հետ մի երեկոյ գնում է հարսնացուի տունը, ուր հաւաքուած են լինում նաև նրանց մօտ ազգականներից մի քանիսը: Ընթրիքից յետոյ ընտրում են երկու խնամիկների կողմից էլ մի մի մարդ, որոնք տեղական բարբառով կոչւում են «խնամխօս» և որոնց պաշտօնն է վկայ և ապագային պահանջող լինել, որ այդ երեկոյեան թէ փեսացուի և թէ հարսնացուի ծնողների կողմից տուած խօստումները ճշտութեամբ կատարուին: Քահանան մի մի բաժակ գինի տալով նրանց, օրհնում է, որ իրենց գործի մէջ արդար և անշահախնդիր լինին:

Ապա այս հրկու խնամխօսները խնամիկների հետ որոշում են հարսանիքի օրը և այն գումարը, որ փեսացուի հայրը պիտի տայ հարսնացուի հօրը: Այս գումարը, որ տատանւում է 15—100 ռ. մէջ, այս գաւառում կոչւում է «պեժինքի փող», որովհետև այս գումարի մի մասը ծախսւում է հարսնացուի օժիտի վրայ, կամ «երեսջուր»:

Բացի այս գումարից, որոշւում է, որ տղայի հայրը տայ նաև 5—5 կուժ գինի, 16—20 ֆունտ պանիր, 1¹/₂—2 բաթման օղի, մի խոյ, մսացու եզան կէսը (և նոյն իսկ եզան կաշուի կէսը) և մի մի նուէր հարսնամօր, եղբօր ու քրոջ համար:

Երբ խնամխօսները մի որևէ բանում չեն կարողանում համաձայնութեան գալ, քահանան և միւս հրաւիրեալները միջամտում են: Ի վերջոյ փեսացուի հայրը վճարում է որոշուած «պեժինքի փողը», և ցրւում են:

Ջուր ձեւել. — Խնամախօսից մի քանի օր յետոյ փեսացուի բարեկամ կանայք հրաւիրւում են փեսացուի տուն, ուր հան-

դիսաւոր կերպով մի կին՝ նախապէս նուէրներ ստանալով զրէթէ բոլոր Հանդիսական կանանցից, ձեռւոյն է փեսացուի և Հարսնացուի Հարսանական շորերը և վերմակի ու ներքնակի աստաւը: Այս վերջինը ուղարկում են Հարսնացուի տուն, որպէսզի նրանք բլրով լցնեն և երես քաշեն և ապա օժիտի Հետ բերեն:

ՏԱԵՂԵԼԻ. — Հարսանեաց շաբթի Հինգշաբթի օրը փեսացուի մայրը Հրաւիրում է աղգական և Հարւան կանանց՝ Հարսանիքի տաշղրէք ծիսին ներկայ գտնուելու: Երբ Հաւաքւում են, խմորի տաշտը դնում են տան մէջ տեղը, ծալլին մի մի մոմ վառւում, մետաքսի կանաչ կարմիր թելեր ձգւում աջ կողմում և յետոյ մի փոքրիկ աղջիկ չոքում է տաշտի առաջ և բռնում ձեռին մաղը, մի ուրիշ փոքրիկ արու երեխայ ալիւր է ածում մաղի մէջ և աղջիկը մաղում է: Այս միջոցին նրանց շրջապատող Հրաւիրեալները «Աստուած շնորհաւոր անէ» ասելով՝ 10 — 20-ական կոպէկ են դնում տաշտի ափին. այս նուէրները պատկանում են Հարսնացուին: Երբ բոլորը տալիս են նուէրներ, Հացթուխի կարգադրութեամբ երեխաները դադարում են ալիւր մաղելուց և պահանջում են փեսացուի Հօրն ու մօրը, որոնք գալով՝ մի թաշկինակ են նուիրում ալիւր մաղողին և մի զոյգ գուլպայ ալիւր ածողին: Երեխաները շարունակում են մաղել, բայց քիչ յետոյ կրկին ընդհատում են և պահանջում փեսացուին, որ գալիս է և մի թաշկինակ նուիրում Հացթուխին: Այս ժամանակ արդէն Հացթուխը ինքն սկսում է մաղել ալիւրը:

Ամիջապէս ճաշ են տալիս բոլոր Հրաւիրեալներին, որից յետոյ աւելի մօտ աղգականներից ընտրում են մէկին՝ «խմորը պիւղող», երկրորդին՝ «պիւլը տուող», երրորդին՝ «լոշը տանող», և չորրորդին՝ «թխած Հացը դարսող», որոնց խմեցնելով մի մի բաժակ օղի, խնդրում են Հետևեալ օրը շատ վաղ զալ, իրենց պաշտօնները կատարելու: Եւ երբ միւս օրը, Հացթուխը շրջապատուած իւր չորս օգնականներով սկսում է Հաց թխել, Հարսնացուի տանից Հինգ թաշկինակ է նուէր գալիս, մինը, ամենալաւը, Հացթուխին, իսկ միւս չորսը՝ միւս կանանց:

Ստանալով նուէրը՝ Հացթուխը մի քիչ ալիւր և գինի է

ածում թոնրի մէջ, խաչակնքում է երեսը, բարեմախտութիւններ անում և սկսում թխել: Առաջին հացը ուղարկում է Հարսնացուին, որից և ստացւում է նրանց տանը թխած առաջին հացը թագաւորի համար: Միւս հացերից ուղարկում է միւս բարեկամներին, որոնք 5—10 կոպէկ նուէր են տալիս յօգուտ հացթուխի:

Իսկ քաղաքում առաջին եօթ հացը և մի թունգի գինի ուղարկում են Հարսնացուի տունը. սրանք էլ վեց հաց (անշուշտ զոյգ), փեսացուի համար մի շապիկ, մի զոյգ գուլպայ, մի մետաքսեայ թաշկինակ և հացթուխի համար մի քանի գլխի թաշկինակներ են ուղարկում:

Մինչդեռ կանայք հաց կը թխեն, տնեցիներից մի քանի տղամարդ օդու շշերը ձեռքերին շրջում են գիւղը և խնդրում մասնակցել Հարսանիքին:

Մսացու մօրթելը.— Ուրբաթ օրը, կէսօրից լետոյ փեսացուի հայրը հրաւիրելով խնամխօսներին և մի քանի բարեկամներ, դաւուլ գուռնի առաջնորդութեամբ տանում է մի հրապարակ տեղ մի եզն: Այստեղ հաւաքւում են գիւղի հարսներն ու աղջիկներն էլ և սրանցից մի քանիսը երեսները կարմիր չարդաթով ծածկած պարում են: Այս միջոցին եզի ոտները կապելով վայր են գլորում. իսկոյն թագաւորը իւր քաւորի հետ, ձեռներին մի մի վառած մեղրամոմ բռնած մօտենալով եզին, իւր դանակով խաչաձև նշան է անում նրա բլի վրայ և լետոյ մի քիչ կտրելով՝ դանակը արիւնաթաթախ դնում է գրպանը: Իսկ քաւորը մօտ մի ըուբլի նուէր է տալիս ստավաճառին, որ մօրթէ եզը: Թագաւորը այս դանակը այդպէս արիւնոտ և փակուած պահում է իւր մօտ մինչև առագաստ մտնելը, որով և ճշտօր չարերը կապուած են մնում և ոչ ոք չի կարողանում զրկել նրան առնական զօրութիւնից:

Քաղաքում դանակի փոխարէն մի կողպէք են թաթախում արեան մէջ, կողպում և այդպէս պահում մինչև առագաստի գիշերը:

Մսացուն մօրթելուց լետոյ ըտլորը ցրւում են, մնում են միայն խնամխօսները, որոնք ընթրում են և դիտում, որ տը-

դայլի Հայրը, իւր խոստման Համաձայն, մորթած եզի կէսը, մի խոյ, որոշեալ չափով գինին, օղին և պանիրը ուղարկէ Հարսնացուի տունը: Մի քանի գիւղերում այս բոլորը բարձում են մի ձիու վրայ և դառուլ-գուռնի առաջնորդութեամբ տանում:

Թագակապ.—Ջաբաթ օրը առաւօտեան Հրաւիրւում են ազգական և Հարեան կանայք թագուորին թագ կապելու: Սրանք բոլորն էլ մի մի խնձորի մէջ արծաթի դրամներ ցցած և մի քանի մետաքսեայ թել բերում և տալիս են խաչեղբոր Անոջը: Սա խնձորներն ու դրամը յանձնում է թագուորի մօրը, սա մի օգնութիւն է, որ գիւղացի կանայք անում են Հարսանիքի ծախսերը թեթեւացնելու նպատակով: Յետոյ մետաքսեայ թելերից, որ երեք գոյնի՝ կանաչ, կարմիր և սպիտակ են լինում, Հիւսում են մի գեղեցիկ պսակ և ամրացնում թագուորի գլխարկի վրայ: Ապա այս դնելով փեսեղբոր գլխին՝ պար են ածում և վերջը յանձնում թագուորին: Այս ծէսը կոչւում է ինչպէս թագակապ, այնպէս և կարմիր-կանաչը կապել: Հրաւիրուածներին Հիւրասիրում են ճաշով:

Քթեթօրհնէք.—Սովորաբար Հարսնացուի Հարսանեկան շուրերը թագուորի Հայրն է պատրաստել տալիս իւր Հաշուով. սա բաղկանում է մի քուլաչայից, մի մետաքսեայ շապկից, մի նոյնպէս մետաքսեայ գօտուց, մի կարմիր չարդաթից, մի զոյգ Հողաթափներից և դանազան նուէրներից, նայած թագուորանց կարողութեան: Նոյն շաբաթ օրը, երեկոյեան քահանան Հրաւիրւում է թագուորի տունը՝ այս Հանդերձը, որ քթիթ է կոչւում, օրհնելու: Այս բոլորը մի սկուտեղի մէջ դնում են տան օջախի մօտ, թագուորի Հայրը վերցնում է թագուորի գլխարկը և դնում քթիթի վրայ, թագուորը և խաչեղբայրը մի մի մօտ ձեռներին՝ կանգնում են քթեթի մօտ: Քահանան օրհնում է քթեթը և աւետարանը դնելով նրա վրայ, բոլորին Հրաւիրում խաչհամբոյր ձգելու: Թագուորի Հայրը խաչհամբոյր ձգելով՝ վերցնում է գլխարկը և տալիս թագուորին, իսկ մի ուրիշ կին վերցնում է քթեթը և պահում:

Սափրելու ծէսը.—Քթեթօրհնէքից յետոյ թագուորը իւր մականներով շրջապատուած սափրւում է: Սա նստում է

մի աթուռի վրայ, աջ կողմում կանգնում խաչեղբայրը, ձեռին մի մոմ բռնած: Այս միջոցին դալիս է թագուորի մայրը ձեռին մի բաժակ գինի բռնած, թաթախում է մատը գինու մէջ և խաչաձև քսում թագաւորի այտերին և ապա մի քանի կաթիլ էլ ածում տան օջախի մէջ: Սափրիչը մի քանի կոպէկ պոկելով խաչեղբորից, սկսում է սափրել թագուորի մորուքը և երբ կիսին է հասնում, դադարում է, և ձայն տալիս. «Այ մականեր, թագաւորը գերի է, ազատեցէք, կը խալտառակուի»: Մակաները համբուրում են թագուորին և մի քանի կոպէկ նուէր տալիս սափրիչին, դնելով թագուորի ձեռքը տուած հայելու վերայ: Սրանից մի քանի տասնեակ տարի առաջ սովորութիւն է եղել, որ թագուորի գլուխն էլ սափրում էին և միայն ճակատի մօտ մի խաչաձև փունջ թողնում: Մակաները համբուրում էին այս փունջը և նուէրներ տալիս:

Թագաւորից յետոյ սափրում է խաչեղբայրը, և այս ժամանակ թագաւորն է մոմը ձեռին նրա մօտ կանգնում, ապա փեսաղբէրը, մականբաշին և մականները, բոլորն առանց բացառութեան, այնպէս որ մորուք չունեցողներին անգամ նստեցնում են և երեք անգամ ածելին քսում նրանց երեսով:

Կետաշէնում և մի քանի այլ գիւղերում նախ սափրում է խաչեղբայրը և ապա թագուորը:

Քաղաքում սափրելու ծէսը կատարում է բաղնիսում, ուր միայն քաւորը վճարում է թէ՛ սափրիչին և թէ՛ բաղնիսպանին, բոլորի լողանալու վարձը: Առաջները սովորութիւն էր, որ դաւուլ գուռնան ածէր բաղանիսի գաւթում:

ՀԱՐԱՆԱՅԻՆ.— Սափրելու ծէսից յետոյ բաւական պարում են և ապա դաւուլ գուռնան «հարի եղանակը» ածելով հրաւրում է բոլորին դնալ հարսնառ, հարսի տունը: Իսկոյն թագուորի քօրը կամ հարսը դնում է գլխին հարսնացուի քթեթը մի սկուտեղի մէջ դարսուած, մի ուրիշ սկուտեղ էլ հարսնացուի տնեցիներին համար նուէրներով դնում են մի երիտասարդի գլխի, և պարելով, երգելով, հրացան արձակելով թագուորի հետ միասին դնում հարսնացուի տունը: Այստեղ սկուտեղ կրող հարսն ու երիտասարդը պար են գալիս և նուէր ստանալով

Հարսնացուի մօրից մի թաշկինակ և մի զոլգ գուլպայ՝ տալիս են սկուտեղները նրան: Յետոյ, երբ բոլորը ներս են մտնում, քահանան այստեղ ևս օրհնում է նշանը և խաչհամբոյր հաւաքում:

Իսկոյն տանում են Հարսնացուի համար բերած «Թագի տակի» շորերը միև սենեակը կամ միևնոյն սենեակի կապերտներով առանձնացրած բաժինը, ուր գտնուում է Հարսնացուն, շրջապատուած մի քանի Հարսներով և ընկերուհի աղջիկներով: Այստեղ էլ Հարսներից մինը, որ արու առջինեկ զաւակ է ունեցած, ընտրուում է գլխաւոր և սկսում է Հարսնացուի Հարսանեկան շորերը հագցնել: Այս միջոցին ընկերուհիները մեղմ ձայնով երգեր են ասում և Հարսնացուին դուրում: Հարսնացուն սաստիկ զղացուած լաց է լինում. ընկերուհիները զգոււմ են նրան. զալիս է նաև մայրը, փաթաթոււմ աղջկան, լաց լինում և ապա նրա արտասուքները կտրելու. լուսով յանդիմանում նրան ասելով. «Խի ես լաց ըլում, որ աղջիկն ա իր Հօր տանը մնացել, որ դու մնաս: Մի բուռը մոխիր ես՝ ուրիշին ենք տալիս, պէտք ա զնաս, ջուրն ենք քցում՝ պէտք ա սուս կինաս, ընկնես. կրակն ենք քցում, պէտք ա աչքերդ խփես, մէջն ընկնես: Վախել մի, քու Հէրն ու մէրը անջիգար չեն. քեզ ոչ ջուրը կը քցեն, ոչ կրակը»:

Մինչդեռ մայրը այսպէս խրատում է Հարսնացուին, գլխաւոր Հարսը սանրում է նրա մազերը, Հիւսում, կռնովը ձգում և մի համբոյր դրօշմում նրա ճակատին. — սա առաջին համբոյրն է, որ այդ Հարսը, որպէս բոլորի մէջ գլխաւոր՝ առնում է Հարսնացուից: Եւ երբ բոլոր շորերը հագցնում է, կանչում են խաչեղբօրը, որ գօտին կապի: Սա էլ մի խնձոր, մէջը մի քանի քսան կոպէկանոցներ խրած տալիս է Հարսնացուին շոր հագցնող Հարսին և նրանից ստանալով գօտին, երեք անգամ անց է կացնում Հարսնացուի վզով և կապում մէջքին, բարեմախտելով, որ նրա առջինեկ որդին արու երեխայ լինի:

Յետոյ գալիս է Հարսնացուի հայրը, զրկում նրան, համբուրում և ասում. «Քալա ջան, իմ ամակը (երախտիքը) չմոռանաս, Հօրդ ճախիլն խէթ աչքով չմտիկ տաս: Աստուած քեզ

Չուխտ ձեռքով քու տիրունջը բաշխի: Հիմիկանց դէնը քու տէրը առաջ Աստօծն ա, եղնա այս ինչը (փեսացուի Հայրը): Այս ասելով, Հայրը հեռանում է, թողնելով օր այժմս էլ մայրը գրկախառնէ նրան և խրատէ. «Բալա ջան, ուր էլ քլիս, մօրդ խաբէ մտահան չանես: Քեզ պահել եմ, ցրտից ու կրակից ազատել, թէ տան միջին՝ կտրի տակին, թէ աչքիցս հեռու՝ թէ աչքիս աղաքին Հազար մի խրատներ եմ տուել, օղհնանք ու անէծք ասել. այ որդի, «անէծ» ջաւը տանի, օրհնանքս՝ գլխիդ գեօլ տայ:—Ղամի ըռելիս տան, սրի ծէրովը ծակտոնն, գլխիդ մոխիր մաղեն՝ անունդ չկտորես, միշտ հալալ փառաբան ես»:

Մինչ Հարսնացուի բաժնում այս է կատարւում, տղամարդկանց բաժնում մի բարձր թաղթի վրայ թագուորը բազմած, իւր մականներով շրջապատուած հագնում է աներօջից աստացած մի զոյգ գուլպան և վերան կապում՝ դոլաղը, իսկ թաշկինակն առնում ձեռքը: Այս միջոցին գուռնաչին մօտենալով թագուորին, ծվծվացնում է գուռնով և թագաւորի Հին գուլպաները պահանջում, օրէնքով դրանք նրան են պատկանում: Պսակ գնալ.—Վերջապէս պատրաստւում են գնալ եկեղեցի. թագուորը, աջ կողմին խաչեղբայրը, գնում կանգնում է օջախի մօտ, Հարսնացուին՝ երկու Հարս կռներն ընկած և միւս քնկերուհիներով շրջապատուած՝ դուրս են բերում և թագուորի յետևը կանգնեցնում: Անմիջապէս թագուորի և թագուհու եղբայրները, կամ մօտիկ ազգականներից երկու պատանիներ փոխարինում են թագուհու կուռը բռնող Հարսներին. սրանք վուզում են կռնադրերներ: Եւ սրանցից Հարսնադրերը մի դռակ է նուէր ստանում թագաւորի տնեցիներից: Այս միջոցին թագուհու մայրը երկու մոմ ձեռին մօտենում է թագուորին, համբուրում նրան և մի մոմը տալիս նրան: Թագաւորը խոնարհում, համբուրում է զօքանչի ծիծը, ասելով. «Հալալ արա նշանածիս տուածդ կաթը»: Ապա միւս մոմը տալիս է խաչեղբօրը և դուրս ելնում տանից լաց լինելով: Զուռնէն ածում է և բոլորը ուղղում են եկեղեցի. առաջից գնում են դաւուլ—գուռնան, պար ածելով մականներին, նրանց յետևից թագուորն,

ու խաչեղբայրը, սրանց հետևում է Հարսնացուն՝ իւր կռնախպէշներով, իսկ մականներն ու Հարսնետոհները շրջապատում են սրանց: Կռնաղպէշներն աշխատում են թօլլ չտալ, որ թագաւորի և թագուհու միջից մարդիկ անցկենան, որպէսզի թագուորը «չկապուի»—չկորցնի իւր առնական զօրութիւնը և այս նպատակով էլ նրանք, Հարսնաղբէրները, հրեմն բռնում են թագուորի և խաչեղբօր փէշերից: Երբ մօտենում են եկեղեցուն, խաչեղբայրը մի քանի կոպէկ է նուիրում ժամկոչին, որ բաց անի եկեղեցու դուռը. իսկոյն մակարբաշին հանում է իւր գրք-չափաւոր և բաց արած պահում, որպէսզի թագուորը եկեղեցի մտնելուն պէս իսկոյն փակի, որով և աղատի նրան «կապ ընկնելուց», որովհետև եթէ այդ միւսնոյնը մի թշնամի անի, թագուորը կը կորցնի իւր առնական զօրութիւնը:

Եկեղեցում քահանան նախ խոստովանեցնում է Հարս ու թագուորին, ձեռք ձեռքի տալիս և ապա գլուխ գլխի դրած՝ պսակում. խաչեղբայրն էլ խաչն աւետարանի վրայ դրած դնում է սրանց գլխներին: Եւ մինչդեռ քահանան պսակի խորհուրդն է կատարում, թագուորը որոնում է թագուհու մատների մէջ այն մոմի փոքրիկ կտորը, որ վերջինիս ընկերուհիները դրել են, կամենալով փորձել նրա խելացիութիւնը: Թագուորը եթէ գտնում է այդ մոմը, տալիս է մակարբաշուն, սա էլ ցոյց է տալիս թագուհու ընկերուհիներին և գովում թագաւորի խելքն ու շնորհքը, իսկ եթէ չի կարողանում գտնել, դարձեալ լայտնում է նրան, որ մի ճար անի, ապա թէ ո՛չ՝ նրանց ծաղրին առարկայ կը դառնայ:

Պսակի խորհուրդը կատարելուց լետոյ քահանան տալիս է Աւետարանը թագաւորի ձեռքը, իսկ խաչը՝ թագուհու, և հրաւիրում Հարսնետոհներին խաչհամբոյր ձգելու:

Ապա դառուլ գուռնան նորից ածում են և բոլորը նոյն կարգով ուղղեւորում են դէպի թագուհու տուն, այս անգամ անպատճառ անցնելով խաչեղբօր տան դռնից: Խաչեղբօր տան առաջ Հարսնետոհները անշուշտ կանգ են առնում. խաչեղբօր մայրը ընդ առաջ է գալիս Հարս ու փեսին, նրանց շուրջը պարելով մի քանի պտոյտ պնում, ապա Համբուրում Հարսին

և մի կարմիր չարդաթ նրա գլխին ձգում: Ապա բոլորին հրա-
ւերում դուան առաջ սարքած սեղանից մի բան ուտելու և մի
բաժակ գինի խմելու: Սովորաբար սեղանի վրայ դրուած է լի-
նում գաթալ, հալուալ, եղաձու, կարագ, մեղր, տապակած
հաւ, խնձոր և այլն: Այսպիսի սեղաններ սարքուած են լինում
նաև միւս մօտիկ բարեկամների դռների առաջ:

Ի վերջոյ Հարսնետոնները հասնում են Հարսնացուի տունը,
ուր հարս ու փեսին առաջ են բերում մի աման եղաձու, մի
մի պատառ ուտեցնում նրանց և մնացածը տալիս մականբա-
շուն: Ներս մտնելով թագաւորը բազմում է իւր թաղթին,
իսկ հարսը գնում է իւր բաժանմունքը. մականներն ու հարսի
ընկերները մնում են, իսկ միւս Հարսնետոնները ցրւում:

Փխի, Բանանց և այլ զիւղերում այս միջոցին նորահարսնց
բախում մի ձողի ծալքին ցցում են մի խնձոր, իսկ ներքեից քաշ տա-
լիս նորահարսի ձեռքով գործած մի զոյգ գուլպայ, ապա մական-
ներն սկսում են հրացան արձակել և աշխատել գնդակով խփել
խնձորին և թռցնել այն ձողի ծալքից. ում յաջողում է այդ,
նա բոլորից գովաբանւում և իբր մրցանակ՝ ստանում այդ գուլ-
պաները *):

Երեկոյին, երբ զուռնան ածում է Հարսնետանը, բոլոր
Հարսնետոնները նորից հաւաքւում են Հարսի տունը, ուր ան-
միջապէս սուփրաներ են փռւում և ընթրիք տալիս: Թաղթի
վրայ իւր մականներով շրջապատուած թագաւորը նստած է
լինում և բերանը մի կտոր բան՝ չի դնում, մինչև որ աները
մի որևէ բան չի նուիրում նրան իբր «Բէրհեթայէ»։ Բայց
իբեն այդպէս ծանր ու մեծ պահող թագաւորին սաստիկ
սեւացնում են թագուհու ընկերուհիները, եթէ նա գտած չի
լինում նորահարսի մատներին մէջ պահուած մօմը: Աղջիկները
ցոյց են տալիս այդ մօմը մականներին և ծիծաղում են թա-
գաւորի անշնորքութեան վրայ և երբ հէնց իրեն են ուղարկում,
նա կարմրելով փող է վճառում, որ թագցնեն. եթէ աղջիկները
քիչ են համարում այդ՝ վերադարձնում են փողը և կրկին ցոյց.

*) Աւետիքեան, Նահատակը. եր. 44.

տալիս մոմը, մինչև որ, վերջապէս, դռնացումն ստանալով թաղաւորից, թաղցնում են: Ընթրիքից լետով հարսնեւորները ցրում են, մնում են միայն թաղաւորը իւր խաչեղբորով և մտերիմ մականներով, որ նորից սեղանին ծառայողների հետ հացի նստելով՝ քէֆ են անում մինչև լոյս:

ՀԱՐՍ ՏԱՆԵԼ.— Կիրակի առաւօտ մականները և հասնեւորները նորից հաւաքւում են հարսնացուի տանը, նախաճաշիկ անում և պատրաստւում հարսը տանելու փեսայի տունը: Հարսը շրջապատուած իւր ընկերուհիներով դուրս է գալիս իւր առանձնարանից և մօտենալով օճախին, ծունը է խոնարհում նրա առաջ և մի քիչ մոխիր վերցնում. ապա դառնալով իւր հօրն ու մօրը, համբուրում է նրանց ձեռքերը և լաց լինում: Այս միջոցին փեսան էլ մօտենում է հարսի ծնողներին, համբուրում նրանց ձեռքերը և կանգնում հարսի մօտ: Անմիջապէս հարսի հայրը բռնում է հարսի ձեռից և տալով փեսի հօրը՝ ասում. «Քու որդուն տուայ, Աստուած խէր տայ, Աստուած ամօթալի չանի»:

—Տուածդ բաղդաւոր ըլի, խնամի ջան, պատասխանում է փեսի հայրը, ստրան դէնը սա իմ որդին ա, աչքիս լսի պէս կը պահեմ:

Ապա հայրը համբուրում է աղջկան և օրհնում, չմոռանալով նաև բարեմախտել. կալիդ քամի ըլի, ջաղացիդ նորաթ ըլի, ջրիդ հերթ ըլի և այլն:

Այս ժամանակ խնամախօսները պահանջում են, որ հարսի օթիտը բերեն, որ և կատարում են: Իսկոյն խնամախօսներից մինը բաց է անում ամէն ինչ և մի առ մի բոլորին ցոյց տալով՝ բղսւում.

—Ձէն կենայ, խնամին տուել ա հարսին

Մի տեղաշոր,

Մի խալիչայ,

Մի սանդուղ

Մի ջեջիմ,

Մի մաֆրաշ,

Մի խուրջին,

Մի ջուալ,

Մի սանդղաման, որի մէջ լինում է մի հացելի, մի սանդղ, ասեղներ, բորոցներ:

Դուլպաներ,

Դուլաղներ.

Տրխետաններ,

Թութունի ու փողի քիսաններ,

Սմետաններ,

Չատուններ (թուկ),

Սքցան,

Կեարդակ,

Կուժ պղնձէ,

Կժի պնդան և ալն *).

Այս ամէն մի իւր ցոյց տալիս մականները իբր պատասխան բղաւում են.

Աստուած շնորհաւոր անի՛, բարով մաշեն, հազարը մաշեն:

Երբ բոլոր օժիտը ցոյց է տրւում, փեսի հայրը 5—10 լուրլի նուէր է տալիս հարսի մօրը իբր «Ջափահախ» և օժիտը պատրաստելու վարձ: Եւ ապա բոլորը բարձում են մի ձիու, տնեցիներէն մինին էլ վերան նստեցնում և ուղևորւում դէպի փեսի տունը: Այս ժամանակ դաւուլ զուռնան ածում է «տարան Հայ» եղանակը և չարածձի մականները հարսի մօրը լացացնելու նպատակով երգում են.

Մէջքդ կոտրի, հարսնամէր **)

Կուռդ ¹⁾ կոտրի, հարսնամէր,

Ոտդ կոտրի, հարսնամէր,

Աչքդ դուրս գալ, հարսնամէր.

Ո, բէյնուրվաթ ²⁾, էս քնչա,

Բախէդ ³⁾ գնում աս, էլ չի գալ. . .

Էդ ո՞ր օր էր, ո՞ր սհաթ,

Որ եադը ⁴⁾ կոխեց էս մղակ ⁵⁾.

*) Այժմ փոքր առ փոքր սովորութիւն է դառնում իբր օժիտ և դրամ տալ, իսկ փեսացուից բացի հարսանեկան հագուստից և միջանի նուէրներից, դրամ (պեժինքի փող) չպահանջել: Քաղաքում, ուր արդէն բաւական ընդունուած է այս սովորութիւնը, աղքատ ընտանիքները դռնէ դուռ են բնկնում և նուէրներ հայցում, իրենց աղջիկներին օժտելու համար:

**) Այս և միջանի ուրիշ երգեր և նիւթեր մեզ տուեց Պ. Տէր-Աւետիքեան.

¹⁾ Չեռքդ, ²⁾ Անգուլթ, ³⁾ Երեսադ, ⁴⁾ Ուրիշը, օտարը, ⁵⁾ Տան շէմք

Ինչի՞ չառար դագանակ ⁶⁾,
 Որ չը կոխեն քու մղակ. . .
 Եկան ու քեզ խաբեցին,
 Մի քիբ չամշով կապեցին ⁷⁾,
 Քու դովաթը ⁸⁾ խեցին,
 Քու կուտանը ⁹⁾ պատռեցին. . .
 Ել լաց միլիբ, սրտամեռ ¹⁰⁾,
 Բանն անցել ա, հորամեռ ¹¹⁾,
 Բախիդ թուշէն ¹²⁾ պաչ արա,
 Կուլաւն ընկի ¹³⁾, ճիտ արա, ¹⁴⁾
 Ճանապա դիւր մեզ հրետին ¹⁵⁾
 Թունգին մակարի ձեռքին ¹⁶⁾
 Մանէթը զալի ճակատին ¹⁷⁾. . .

Մի քանի դիւզբնում Հարս ու Կիսան նախ ուղեորւում են Համբուրնու գիւղի օճախից և ապա դնում տուն: Գիւղի օճախը, որ Վարանդայի բոլոր գիւղերում դրէթէ առանց բացառութեան կալ, մի սովորական օճախ է, միայն պատկանելիս է եղել գիւղի հիմնադրին և կամ առաջնակարգ և երկար ժամանակ գիւղը կառավարող անձին:

Երբ Հարսն ուրիշ դիւզ է տաւում, մի մարդ ուղարկում են, որ իմաց տայ: Սա տեղական բարբառով կոչւում է «դուէս»: Այս կոչումը դրան տալը իրենք գիւղացիները այսպէս են բացատրում. որովհետև ճանապարհորդութեան ժամանակ աղուէս տեսնելը բախտաւորութեան, իսկ գալլ տեսնելը դժբախտութեան դուշակ է Համարւում, ուստի և ընդառաջ եկող մակարները սրան տեսնելիս «աղուէս, աղուէս» են բղաւում, այսպիսով ցանկանալով, որ ճանապարհորդութիւնը յաջող և ուրախ անցնի: Մի բան ևս ուշադրութեան արժանի է. այս գնացքի ժամանակ մակարները առանց ալլալութեան սրով խփում սպա-

⁶⁾ Հաստ ձեռնափայտ, ⁷⁾ Լեզուդ. կապեցին, ⁸⁾ Քո ամենաթանգագին երեխային, տան ամենաազիզ անդամին, ⁹⁾ Գլխի կարմիր թաշկինակը, աղլուխը, որը զարդարանք է համարւում, ¹⁰⁾ Սրտից զուրկ, ¹¹⁾ Հօրից զուրկ. սրտամեռ նաև դործ է ածւում իբրև անէծք սիրտդ մեռնի, հօրամեռ—հայրդ մեռնի, ¹²⁾ Երեսխալիդ. այտերից համբուրի, ¹³⁾ Կուլաւն ընկի—գրկի, ¹⁴⁾ Ճիտ արա—սեղմի, ¹⁵⁾ Զուտով ճանապարհ գցիր մեզ, ¹⁶⁾ Մի թունգի գինի դիւր մակարներից մէկի ձեռքին ճանապարհին խմելու համար, ¹⁷⁾ Մի բուրբի նուիրի, զաւային, կպցրու նրա ճակատից:

նում են պատահած հաւերին և սրանց ոչ մէկի տէրը իրեն իրաւունք չէ համարում պահանջել հաւի արժէքը: Յրբեմն այսպէս են վարւում նաև պատահած գառների և ուլերի հետ. բայց այսպիսի դէպքերում թագուդը և կամ խաչեղբայրը փոքր ի շատէ բաւականութիւն է տալիս գառի կամ ուլի տիրոջը:

Ի վերջոյ հարսնէորները հասնում են փեսի տունը. այստեղ տնեցիներէից մին բարձրանում է կտուրը և ընկոյզ, կաղին և կամ չոր մրգեր շաղ տալիս հարս ու փեսի գլխին: Իսկոյն մեծ իրարանցումն է տեղի ունենում, մականները և երեխաները միմեանց հրհրելով սկսում են հաւաքել: Այս միջոցին դուրս է գալիս փեսի մայրը և կամ տատը, եթէ կենդանի է, մի քանի շրջան անում հարս ու փեսի առաջ, իբր թէ պարում է և յետոյ համբուրում նախ թագուորին և ապա հարսին, ու կարմիր չարդաթ ձգում գլխին: Այս ժամանակ փեսի հայրը կամ մի ուրիշ տղամարդ, մի ափսէի մէջ եղաձու և մի ուրիշ ամանով կրակ, վերան խունկ ածած, բերում է առաջ, երեք անգամ շրջում հարս ու փեսի շուրջը և յետոյ մի քիչ եղաձու տալիս փեսին ու խաչեղբօրը ուտելու, իսկ մնացածը չանձնում մականբաշում՝ մականներին բաժանելու: Ամիջապէս մէկ մէկ մօտենում են փեսի կողմի բարեկամ կանայք և համբուրելով հարսին՝ մի մի թաշկինակ ձգում գլխին: Խեղճ հարսի գլուխը ամբողջովին ծածկւում է 20—40 թաշկինակների տակ, մինչև որ կունեղբայրը վերցնում է բոլորը, մինի մէջ կապում, և քաշ տալիս իւր կողքից:

Մի քանի գիւղերում մականներն այս միջոցում ստիպում են թագաւորի ծնողներին հարսի առաջ պար գալ:—Նրանք պարում են և երբ մականները «քօլօլ, քօլօլ» են բղաւում, ամուսինը յարձակւում է կնոջ վրայ և ուզում է նրան համբուրել, իսկ նա՝ ամէն ճիգ թափում է ազատուելու «եաղի տարած գլխամեռի» ճանկերից: Հարսնէորները բարձրաձայն ծիծաղում են և զուարճանում:

Մի քանի գիւղերում էլ, ինչպէս Բանանց, Բրաջուր և այլն, մի կամ երկու ծաղրածու մուշտակը թարս են հագնում, երեսներին դիմակ դնում, պոչեր շինում և հարսնէորների ա-

ուաջն ընկած հաղար ու մի ծամածուլթիւններ ու հանաքներ անում և բոլորին ծիծաղեցնում: Սրանք կոչւում են *օյնաճոփ*, այսինքն աւագ և կրտսեր ծաղրածուներ:

Վերջապէս հարսին ներս են տանում և առանձնացնում նրա համար պատրաստուած անկիւնում և կամ առանձին սենեակում: Այստեղ հոգատար կռնախպէրը և կամ ինքը հարսը նալում են դռնների տակը, որ տեսնեն թէ հարսի խելքը փորձելու համար փայտի կտոր, կամ բապուճներ չեն թաքցրած նրա նստելու տեղում:

Ապա հարսնեւորները ցրւում են, իսկ թագուորը խաչեղբոր և մականների հետ դառուլ գուռնի առաջնորդութեամբ դնում է գերեզմանատուն և օրհնել տալիս իւր հին ու նոր ննջեցեալների գերեզմանները: Այստեղից վերադառնալիս մականբաշին հրաւիրում է դրանց իւր տուն, ուր մինչև երեկոյ քէֆ են անում և ապա վերադառնում թագուորի տունը:

Թագաւորաճոճութեամբ.—Քանանց և միջանի ալլ գիւղերում, մականբաշին իւր հետ մի հաւ է տանում գերեզմանատուն: Այստեղ ննջեցեալների գերեզմանները օրհնելուց յետոյ թագուորը բռնում է այդ հաւի գլխից և բոլոր ուժով խփում բռնը գերեզմանաքարին, այնպէս որ գլուխը կտրոււմ է:

Այս հաւը նա ուտում է այդ երեկոյ իւր մականների հետ: Այս ծէսը կոչւում է *Խփաւորահոր*:

Քաղաքում հարսին եկեղեցուց ուղղակի փեսայի տունն են տանում. այստեղ դուռն առաջ երկու լաւաշ հաց են ձգում նրա ուտելին և երկու յախճապակեայ ափսէ դնում ոտների մօտ: Նորահարսը ոտով խփում կտրում է ափսէները և հացերը կտրտելով դէպի յետ ձգում: Երեխաները և մականները խռնւում են իրար հացի կտորները հաւաքելու:

Մի քանի գիւղերում էլ պատահում է, որ չարաճճի մականները փեսայի դուռնը մօտենալիս հետեւալ երգիծաբանական երգն են ասում.

Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,

Տես քեզ համար յինչ ենք բերել.

Գլուխդ քթվող ¹⁾ ենք բերել,
 Նորերդ թափող ²⁾ ենք բերել,
 Ոտներդ լուացող ենք բերել,
 Մէջքդ քորող ենք բերել. . .
 Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Նլիբդ մաղող ենք բերել,
 Խմորդ հունցող ենք բերել,
 Տեափդ ³⁾ բռնող ենք բերել,
 Խմորդ պիւլող ⁴⁾ ենք բերել,
 Թորոնդ էրող ենք բերել,
 չացդ թխող ենք բերել. . .
 Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Նուշան քաղող ենք բերել,
 Փիւփերթ հնրող ⁵⁾ ենք բերել.
 Արագ վառող ենք բերել,
 Կրակ անող ենք բերել,
 Խորակ եփող ենք բերել,
 չաց-ջուր անող ենք բերել. . .
 Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Գոմդ քերող ենք բերել,
 Մարագդ սրբող ենք բերել.
 Կովդ կթող ենք բերել,
 չորթդ կապող ենք բերել,
 Ուլդ բռնող ենք բերել,
 Այծդ կթող ենք բերել,
 Խնէցիդ ⁶⁾ հարող ենք բերել,
 Մածունդ մէրող ենք բերել,
 Թանդ կտրցնող ⁷⁾ ենք բերել,
 Իւղդ հալող ենք բերել. . .
 Թագաւորի մէր տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Տունդ սրբող ենք բերել,
 Կուժդ ուսող ենք բերել. . .
 Բաղլէդ ջրող ենք բերել,

¹⁾ Գորող, ²⁾ Մաքրող, ³⁾ չաց թխելու գործիք, ⁴⁾ Խմորից գնդեր շինող,
⁵⁾ Մաքրող, ⁶⁾ Խնացին շարժող, իւղ ու թան պատրաստող, ⁷⁾ Եփող,
 եռացնող:

Լօբիդ քաղող ենք բերել,
 Ջորդ կարող ենք բերել,
 Գլուխդ լուացող ենք բերել,
 Ասեղդ թելող ենք բերել,
 Գուլբէդ անող ենք բերել...
 Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Զիրեփդ ¹⁾ խող ենք բերել,
 Մառանդ մտնող ենք բերել,
 Բանալիդ խող ենք բերել,
 Չանչ-կրող ²⁾ անող ենք բերել...
 Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Գլուխդ հողող ենք բերել,
 Տունդ քանդող ենք բերել,
 Գլխիդ բամբող ³⁾ ենք բերել,
 Ումբող ⁴⁾ թաղող ենք բերել...
 Տղիդ խող ենք բերել,
 Պոչդ պոկող ենք բերել,
 Ծամէդ քաշող ենք բերել,
 Տունդ տիրող ենք բերել...
 Թագաւորի մէր տանէն դուրս եկ,
 Տես քեզ համար ինչ ենք բերել.
 Սատանայի ճուտ ենք բերել,
 Մութ գժովաքից դե ենք բերել...
 Ինչ որի ան, քու ապրանքն ան,
 Դու ես միայն սրա տէրը.
 Ե՛կ բրօժի ⁵⁾, կուլան ընկի ⁶⁾,
 Ետնէդ գցի ⁷⁾ ու ներս քաշի.
 Թէ Տէրն ուզի բաղդ քու օջաղի,
 Թամուզ ⁸⁾ կը պահի սիրտը հարսի...

ԿԱՄԵՅ. — Նոյն երեկոյին Թագաւորի տնեցիները իրենց տան
 կտրում հնչեցնելով դաւուլ-դուռնան՝ հրաւիրում են տղամարդ
 հարսնետրսերին ընթրիքի: Կարճ միջոցում հաւաքւում են և
 անմիջապէս նստում ընթրելու: Երկար և նեղ սփռոցների շուր-
 ջը ծալապատիկ նստոտում են բոլորը, աշխատելով պահպանել

¹⁾ Կերակուր ածելու գործիք, ²⁾ Քիչ անիճող, ³⁾ Խիող, ⁴⁾ Կեանքդ:

⁵⁾ Բարեկիր, ⁶⁾ Դրկիր, ⁷⁾ Ետևիցդ տար տուն, ⁸⁾ Մաքուր:

աւագութեան կարգը: Այս երեկոյ աշխատում են որքան կտրելի է լաւ հիւրասիրել, որպէսզի դժգոհ մնալով «կանչի» ժամանակ քիչ փող չտան: Սովորաբար մատուցանում են խորոված, բոգրաշ, հրեշտակ, փլաւ և այլն:

Հարսանիքի ժամանակ ամենայարգի կերակուրը Համարում է կորկոտը: Երբ նրա կաթսան հանում են թոնիրից և ներս բերում Հարսնետրների մօտ, ածողների խումբը տեղից վեր է կենում և սկսում ածել «Տատի-սուխն» *) ժողովրդական եղանակը և երբ պնակներն ածած բաժանում են՝ դաւալը մօտեցնում է նախ թագաւորին, քաւորին և լիւրջ Հարսնետրներին և նրանց առաջ ածում, մինչև որ միքանի կոպէկ նուէր է ստանում:

Ընթրիքից լիւրջ սկսում է հաշտ: Մի ափսէ պնում են քահանայի կամ գիւղի տանուտէրի առջև. զուռնաչին, որ որպէս ամենալիզուանի և պնդեբոս մարդ, յանձն է առնում նուէրներ հաւաքել, դառնում է դէպի Հարսնետրները.

«Ա՛ խալիւր, ցնծացէք, շատ գիշեր ա անցկացել. ով ինչքան ուզում ա, թագաւորի սիրուն տալ: Դուք էլ տուն էք, աղջիկ ու տղայ ունէք. էս Հացափոխ ա, էսօր էս տանը՝ էքուց ձեր տանը»:

Ամենից առաջ տալիս է խաչեղբայրը՝ 2—10 ռ.: Զուռնաչին ցոյց է տալիս բոլորին և բղաւում.

«Թագաւորի մականներ»:

—Հրամմէ. պատասխանում են մականները:

«Աստուած խէրն ու բարին ձեզ կամէ: Սուրբ Սարգիսը խաչեղբորը մուրազը տալ... մեր թագաւորի սիրուն բաշխեց (այսքան) մանէթ. սէլով սեղան, ոտով ոչխար... շէն կենայ»:

—Ջէն կենայ, շէն, կրկնում են մականները:

Ապա նուէր է տալիս Հարսի Հայրը, Հօրեղբայրը և այլն, մինչև վերջին Հայսնետրը: Ի վերջոյ տանուտէրը հաշտում է

*) Հայ զուռնաչիները (դաւալները) զանազան եղանակներ են հնարում և նրանց մի որ և է տեղի, ձորի, սարի անուն դնում, որովհետև ինչպէս իրենք են ասում, իրենց այդ եղանակը նկարագրում, պատկերացնում է այդ վայրը: Այսպէս բանանցեցի դաւալ Թիւնի որդի դաւալ Աւագը հետեւեալ անուններն է գրել իւր հնարած եղանակներին. Զկնի-ձորին, Լալուկ-Քարին, Գեօլ-գրաղին, Պաքելի-աղբիւրին և այլն:

բոլորը, մի կամ երկու ըուբլի տալիս զուռնաչուն, իսկ մնացածը լանձնում թաղաւորի հօրը: Այս կանչից հաւաքում է 50 — 200 բուբլի, մի գումար, որչափ հաղիւ ծախսուած լինէր հարսանիքի ընթացքում:

Կանչից լետոյ տեղի է ունենում պար, որի ընթացքում մականները և հարս ու աղջիկ ամենայն կերպ աշխատում են իրենց շնորհքները ցոյց տալ: Եւ երբ հարսնւորները ցրւում են, սեղանին ծառայողներն են նստում ընթրելու. սրանց միանում են մականները թաղաւորի և խաչեղբօր հետ: Քէֆը վերսկսւում է. այս միջոցին հարսի տանից թաղաւորին խոնջա է գալիս. — մի մեծ սկուտեղի մէջ դրուած է լինում երկու ափսէ փլաւ, մի եփած հաւ, եօթը դաթայ, կարմիր ներկած հաւկիթներ, մի ափսէ եղաձու, մի քանի լոշ հացեր և այլն: Խաչեղբայրը մի քանի կոպէկ նուէր տալով խոնջա բերողին՝ առնում է այն և լանձնում մականբաշուն, սա էլ պահ է տալիս տնեցիներին, որ միւս օրը մականների հետ ուտեն: Ուտել խմելուց և երկար պարելուց լետոյ մականները ցրւում են, իսկ խաչեղբայրը քրնում է թաղաւորի հետ:

Թագ վերացում. — Հետեւեալ օրը, երկուշաբթի, թագաւորի հայրը, եթէ միայն գոհ է կանչի միջոցով ստացած նուէրներից, հրաւիրում է կանչին մասնակցողներին և հիւրասիրում նրանց ճաշով, որից լետոյ քահանան կատարում է թագ-վերացման ծէսը. — Մի ափսէի մէջ դնում են երկու կտոր արած մի հաց. ափսէի ծայրերին երկու մոմ վառում, սրա մօտ կանգնում են հարս ու փեսան՝ գլուխ գլխի յենած և խաչեղբայրը՝ սուրն ու պատեանը սրտից գլխներին խաչաձև բռնած: Երբ քահանան վերցնում է թագը, դնում է ափսէի մէջ, հացի վերան:

Իրանց զիւղացիների բացատրութեամբ սուրը նշան է, թէ միայն մահը կարող է բաժանել ամուսնացած զոյգին, իսկ հացը քախտաւոր լինելու նշանակ է:

Միքանի զիւղերում ինչպէս և քաղաքում, նախքան թագվերացումը մի քիչ կտրում են հարսի մագերից, «որպէսզի

նրա սիրտը սկեսրանց տան վրայ լինի», այսինքն իւր Հայրական տանից աւելի սկեսրանց տունը սիրէ:

Թագ վերացումից յետոյ մականները Թագաւորի Հետ գրնում են խաչեղբոր տունը զուարճանալու: Այստեղ մակարբաշին պահանջում է Թագաւորից նրա Համար նախընթաց երեկոյին աներանց տնից ուղարկուած խոնչան, իսկ միւս մակարներից մի մի Հաւ: Ով անմիջապէս չի բերում Հաւը, մակարբաշին Հրամայում է կտուրից Թոկ ձգել և դրա մի ոտը կապել: Այսպէս մի ոտի վրայ կանգնած պիտի սպասէ մակարը, մինչև որ նրա գոքանչը մի Հաւ ուղարկէ և ազատէ նրան: Մակարբաշին սրանով էլ չբաւականանալով, աւելի պահանջներ է անում և կապում է մակարների երկու ձեռքերը, երկու ոտքը և ալլն: Այս երեկոյ ծայրագոյն իշխանութիւնը նրան է պատկանում և նա ամէն միջոց գործ է դնում կարելոյն չափ ուրախ անցկացնելու և սեղանին շատ բան ունենալու:

Գիշերը մակարները ցրւում են, իսկ Թագաւորը մակարբաշու Հետ գնում է չոր մրգեր նորահարսի Համար և գալիս առաքաստ մտնելու: Այդ երեկոյ Հարսի մայրը նորահարսի Համար խոնչայ է ուղարկած լինում, որ նորապսակները առանձին ուտում են:

Կուսութեան ապացոյց սաւանը խտուրթեամբ պահանջւում է: Չեղած դէպքում շատ անախորժ դէպքեր են տեղի ունենում:

Թագակապ.— Երեքշաբթի առաւօտեան Հարսնէոր կանայք են Հաւաքւում Թագաւորի տան: Երբ բոլորը Հաւաքուած են լինում՝ խաչեղբոր կինը կամ մայրը դնում է մի առաջամատոյցի վրայ Հարսի Թագը, սրա վրայ մի Հաց և ապա՝ մի ափսէ: Յետոյ Հրաւիրում է Հարսնէորներին, որ յօգուտ Հարսի նուէրներ տան: Ամէնքը 10 կ.—5 բուբլի ձգում են ափսէի մէջ, ոմանք էլ դրամը խնձորի մէջ խրած դնում են առաջամատոյցի վրայ: Այս նուիրաբերութիւնից յետոյ Հարսի Թագը մի երիտասարդի, իսկ Թագաւորինը մի աղջկայ զլխի դրած պար են ածում և յապա նստում ճաշում ու ցրւում:

Խախտը.— Սովորաբար աղջկայ կողմից շատ քիչ ծախս

4. լինում, իսկ տղայի կողմից լինում է մօտաւորապէս հետևելը.

Ա. ՆՇԱՆՈՒՐԷԻՆ

Մի ոչխար	2—3	ր.
Գինի և օղի	2—3	
Պանիր	1—2	
Հաց	2—3	
Խաղ	1—2	
Հաւ	1—2	
Չամիչ և չոր մրգեր	1—1	
Մատանի	1—2	
Մի արծաթ մանէթ շղթաներով	4—4	
Բոլորը՝	15—22	

Բ. ՏԱՐՈՒՅ ԸՆՔԱԳԲՈՒՄ

Հարսնացուն նուէրներ 25—30 ր.

Գ. ՀԱՐՍԱՆԻՔԻՆ

Գինի	48	—	60.
Օղի	30	—	40.
Մի եղ	15	—	25.
Ոչխար	2	—	3.
Մի մոթալ պանիր	12	—	13.
Հացի	13	—	15.
Բաժինքի փող	15	—	200.
Հարսին զգեստ	20	—	45.
Քաւանային	3	—	3.
Եկեղեցուն	1	—	1.
Ըթուաւառ	6	—	6.
Ջուռնաչուն	5	—	10.
Մանր ծախսեր	10	—	25.
Բոլորը՝	180	—	447
Ընդամենը՝	220	—	499